

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ-Ի 2008Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1. <<Վերապատրաստման դասընթացների կազմակերպում>>

<<Մասնագիտական մանկավարժություն>> ծրագրով վերապատրաստվել են հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 488 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ:

ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մշակված և ՀՀ ԿԳՆ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հավանությանն արժանացած ծրագրով վերապատրաստվել են ուսումնական հաստատությունների 11 տնօրեններ և 15 փոխտնօրեններ:

ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մշակված և ԿԱԻ ղեկավարության կողմից հաստատված ծրագրով վերապատրաստվել են պետական կրթական չափորոշիչներ մշակող 50 փորձագետներ:

Նույն ծրագրով վերապատրաստվել են ՄԿՈՒԶԱԿ-ի 11 աշխատակիցներ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2. <<ՄԿՈՒ որակավորման կարողութենամետ չափորոշիչների և գնահատման չափանիշների մշակում>>

ՀՀ ԿԳՆ հաստատմանն է ներկայացվել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական 27 մասնագիտությունների ցանկը, որոնց համար 2008թ. պետք է չափորոշիչներ մշակվեին: Հաստատված ցանկից չափորոշիչներ են մշակվում 24-ի համար: 2008թ. մշակվել են 22 պետական կրթական չափորոշիչի նախագիծ: Մնացած 3 մասնագիտությունների համար արդեն գոյություն ունեն մշակված և հաստատված չափորոշիչներ, իսկ 2 մասնագիտության գծով աշխատանքային խմբեր չեն ձևավորվել համապատասխան մասնագետների բացակայության պատճառով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4. <<Չափորոշիչների տվյալների ազգային բազայի ստեղծում>>

Աշխատանքներն հանձնարարվել են հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կատարողին: Ազգային բազայի համակարգչային մշակումը կատարված է, չափորոշիչները պատրաստ լինելուն և հաստատվելուն զուգահեռ դրանք կներմուծվեն բազա:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5 <<ՄԿՈՒ բարեփոխումների ծրագրի իրականացման գնահատման համակարգի մշակում>>

Մշակված է համակարգ, որը օգտագործվելու է ՄԿՈՒ համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքները գնահատելու համար: Համակարգում ներկայացված է գնահատման ընդհանուր հայեցակարգը, քայլերի հաջորդականությունը, մեթոդաբանական մոտեցումները, արդյունքների ամփոփման կարգը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7. <<ՄԿՈՒ վերաբերյալ եվրոպական և այլ երկրների փաստաթղթերի թարգմանություն և տարածում>>

Թարգմանված է 800-ից ավել էջով 13 անուն փաստաթուղթ, որոնք վերաբերում են մասնագիտական կրթությանն առընչվող զանազան հարցերի և դրանց լուծման բնագավառում այլ երկրների մոտեցումներին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8. <<ՄԿՈՒ բարեփոխումներին ուղղված միջոցների օգտագործման թափանցիկության ապահովում>>

Համապատասխան պայմանագիր է կնքված հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների շարք իրականացնելու, տպագիր մամուլում նյութեր հրատարակելու, համակարգի վերաբերյալ ֆիլմ նկարահանելու նպատակով:

Արդյունքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

4 ռադիոհաղորդում /ՄԿՈՒ համակարգի բարեփոխումներ, դասախոսների վերապատրաստման գործընթաց, պետական կրթական չափորոշիչներ, ՄԿՈՒՋԱԿ-ի գործառույթներ/, 2 հեռուստահաղորդում՝ Երկիր մեղիա՝ ՄԿՈՒ հիմնախնդիրների մասին, 4 հրապարակում՝ Երկիր, Կրթություն, Ազգ, Հայոց աշխարհի թերթերում: 100 օրինակ DVD ֆիլմ ՄԿՈՒ բարեփոխումների մասին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12 <<ՄԿՈՒ ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական երաշխավորությունների մշակում և հրատարակում>>

Պատվիրված և ձեռք են բերված հետևյալ մշակումները.

- <<Կենսաչափություն>>, ուսումնական ձեռնարկ
- <<Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ>>, ուսումնական ձեռնարկ
- <<Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների անատոմիա և ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով>>, ուսումնական ձեռնարկ
- <<Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ>> առարկայի ուսումնական ծրագիր և մեթոդական ուղեցույց

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14 <<Չափորոշիչների և ուսումնական պլանների փորձաքննության անցկացում>>

Իրականացվել է 22 պետական կրթական չափորոշիչների փորձաքննություն:

Միաժամանակ, մշակվել են մի շարք տեխնիկական առաջադրանքներ առանձին միջոցառումների մրցույթի կազմակերպման համար.

1. ՄԿՈՒ վերաբերյալ տեղեկատվության տարածում

2. ՄԿՈւ քաղաքականությանը և ռազմավարությանը վերաբերող հետազոտական նախագծերի իրականացում

3. ՄԿՈՒ վկայագրման համակարգի մշակում և ներդրում

Հայտարարվել է մրցույթ, սակայն մասնակիցների քանակն եղել է անբավարար և մրցույթը չի կայացել:

Բացի վերոգրյալից, ՄԿՈՒԶԱԿ-ը իրականացրել է ավելի քան 40 ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, վերապատրաստման ծրագրերի փորձաքննություն, ուսումնական հաստատությունների ղեկավարների և դասախոսների մեթոդական խորհրդատվություն: